

## Աիդա Մարիատյանի էլույթի տեքստը

### Ելույթ հուշ-երեկոյին

Միրելի՛ ուսանողներ, հարգելի՛ գործընկերներ, հյուրեր, Աիդա Մարիատյանի հարազատներ ու մտերիմներ: Այսօր բոլորիս այստեղ է բերել մի Մեծ Բացակա, որի հոգին թեև երկնքում է, բայց նրան բացակա չենք դրել ու չենք դնելու, քանզի նա մեր կողքին է, մեր մեջ, քանզի մեր ականջներում շարունակում է հնչել նրա մեղմ ձայնը, քանզի տեսնում ենք նրան այստեղ՝ Բարեժպիտ ու համեստափայլ...

Նա դպրոց եկավ մանկավարժական ինստիտուտը ավարտելուց անմիջապես հետո, եկավ՝ շարունակելու ֆրանսերենի տաղանդավոր մասնագետ ու բացառիկ մանկավարժ հոր՝ Սերգեյ Մարիատյանի գործը, շարունակելու և առավել արժևորելու ֆրանսերենը, սիրելով ու սիրել տալով այն իր սաներին՝ նրանց համար դարձնելով երկրորդ մայրենի...

Մարդուն լիարժեքորեն ճանաչում են նրա հետ երկար հաղորդակցվելու ընթացքում, իսկ մենք երկար տարիներ միասին ենք աշխատել թե՛ Իջևանի առաջին դպրոցում, թե՛ ազգային վարժարանում, թե՛ համալսարանում, տեսել ու զգացել գործընկերների, ծնողների ու աշակերտների, համալսարանում նաև ուսանողների կարծիքներն ու վերաբերմունքը, այն է՝ նա հիանալի տիրապետում է ֆրանսերենին, հրաշալի մանկավարժ է, բարի է, կամեցող, բարեհամբույր, հարգալից ու սիրալիր շրջապատի նկատմամբ ...Եվ այդ կարծիքը նոր որակներ էր ստանում արդեն դասարաններում ու լսարաններում...Ֆրանսերենի փայլուն գիտակ ուսուցչուհու, ապա և դասախոսուհու բարեհունչ լեզվով ունկնստահաճ ֆրանսերենը խուժում էր լսարան որպես քերականություն, որպես սիրաշաղախ քնարերգություն ու ֆրանսիական հանճարեղ գրողների արձակ... Դասը դառնում էր որպես քաղցրահնչյուն երաժշտություն՝ նաև Շառլ Ազնաուրի երգերի մոգական ազդեցությամբ, դառնում էր նկարչություն, որ դասախոսուհին „անցկացնում էր,, աշխարհահռչակ Լուվրի պալատում, և ուսանողները զմայլված քարանում էին հանճարեղ արվեստագետների կտավների ու քանդակների առջև, ապա „շրջում էին,, Փարիզում և Բուլոնյան արքայական այգիներում, տեսնում վեր խոյացող Էյֆելյան աշտարակը, Մենայի մեղմահոս ջրերն ու նրա ափերին զբոսնող Բալզակին, Մոպասանին և մյուսներին...

Կարո՞ղ էին Իջևան քաղաքի, մերձակա գյուղերի, Նոյեմբերյանի ու Շամշադինի շրջանների ուսանողները պատկերացնել, որ մի գեղեցիկ օր շնորհիվ իրենց դասախոսուհու լայն ճանաչման ու բարձր գնահատանքի՝ բազմիցս խմբերով կհայտնվեն օրեր շարունակ կշրջեն հեքիաթային քաղաքի փողոցներում, կլինեն հանրահռչակ թանգարաններում, կհիանան ֆրանսիական մշակույթով և ֆրանսիայում կայացած հանդիպումների ժամանակ իրենց իմացությամբ կզարմացնեն հյուրընկալներին:

Մարդանյան Աիդան ֆրանսերենը դարձրեց աշակերտների և ուսանողների ամենասիրելի լեզուն, դարձրեց երազանքներ ծնող ու ու իրականացնելու հնարավորություն ընձեռող իրական միջոց: Ինչպես ինքը, այնպես էլ իր սաները նրա շնորհիվ սիրահարվեցին հիասքանչ ֆրանսերենին ու Ֆրանսիային, սիրո քաղաք Փարիզին, նրա հինավուրց պատմությանը, նրա մշակույթին ու սիրեցին, շա՛տ սիրեցին...

Պատահական չէր, որ գնալով մեծանում էր ֆրանսերեն սովորել ցանկացողների թիվը: Նա ուներ տասնյակ խմբեր, որոնց անձնվիրաբար պարապում էր՝ չհասցնելով հոգալ անգամ իր առողջության մասին...

Այս աշխարհից գնացողների անվան դիմաց սովորաբար նշվում են նրանց ծննդյան ու մահվան թվականները... Այսպես է և Աիդա Մարդանյանի պարագայում... Բայց նրա ապրած տարիները մեծ վաստակի անուրանալի, չմոռացվող արժեքներ են, որոնք նրան դասում ու պիտի դասեն ողջերի շարքին, չմոռացվող ու անսահման երախտագիտության արժանի մարդկանց շարքին...

Սիրելի՛ Աիդա, Դու ֆիզիկապես մեր կողքին չես, դու չես լսում մեզ ու չես տեսնում սաներիդ ու հարազատներիդ աչքերում ծովացած սիրո, անսահման կարոտի ու անամոք վշտի արցունքները, բայց ո՛վ գիտե Աստծո հրաշքները.. Գուցե նա քեզ հասցնի մեր հարգանքն ու սերը, մեր հասարակության երախտագիտությունն ու մեծարանքը, լսե՛ս, քեզ նման համեստաբար ժպտաս ու... զղջաս մեզ բոլորիս ցավ պատճառելու, մեզնից անժամանակ ու անսպասելի հեռանալու համար...

Դու լուսավոր հետազիծ ես թողել, հոգիդ թող հավերժորեն լույսերի մեջ լինի... Թող որ քո անվամբ կոչվող լսարանի դռները բացող ու ներս մտնող յուրաքանչյուր ուսանող ու համալսարանական բարի հիշի քո անունը, քո մեծ երախտիքը, ու մրմնջա

լռելյայն... Ձեզ բացակա չենք դնում, Ձեզ չենք մոռանալու, միշտ հիշում ու հիշելու ենք, սիրելի, շա՛տ սիրելի ընկեր Մարդանյան...

### **Discours à la soirée commémorative**

Chers étudiants, chers collègues, invités, parents et amis d'Aida Mardanyan. Aujourd'hui, nous avons tous été amenés ici par une Grande Miss, dont l'âme est au ciel, mais nous ne l'avons pas quitté et nous ne le quitterons pas, car il est à côté de nous, en nous, car sa voix douce continue de résonner à nos oreilles., parce que nous le voyons ici, béni et modeste...

Il est arrivé à l'école immédiatement après avoir obtenu son diplôme de l'institut pédagogique, il est venu poursuivre l'œuvre de son père, Sergueï Mardanyan, talentueux spécialiste du français et pédagogue exceptionnel, pour continuer et valoriser davantage le français, l'aimer et le donner à ses élèves, ce qui en fait une deuxième langue maternelle pour eux...

Une personne est pleinement connue au cours d'une longue période de communication avec elle, et nous avons travaillé ensemble pendant de nombreuses années au premier camp d'Idjevan, à l'école nationale et à l'université, nous avons vu et ressenti les opinions et les attitudes de collègues, parents et étudiants, ainsi que les étudiants de l'université, c'est-à-dire qu'il maîtrise parfaitement le français, est un merveilleux professeur, est gentil, volontaire, amical, respectueux et aimant envers les autres... Et cette opinion gagnait de nouvelles qualités. déjà dans les salles de classe et les salles de classe... Dans le langage agréable du brillant professeur de français, puis du conférencier, le français agréable de l'auditeur coulait sous forme de grammaire, de poésie lyrique coquette et de prose d'écrivains de génie français... La leçon est devenue. comme une musique douce, également avec l'influence magique des chansons de Charles Aznour, est devenue une peinture que le conférencier a "tenue" dans le célèbre palais du Louvre, et les étudiants ont admiré des artistes brillants devant des peintures et des sculptures, puis ils ". marché" à Paris et dans les jardins royaux de Boulogne, ils ont vu l'imposante Tour Eiffel, les eaux douces de la Seine et Balzac, Maupassant et d'autres se promenant sur ses rives...

Les étudiants de la ville d'Idjevan, des villages voisins, des régions de Noyemberyan et de Shamshadin pourraient-ils imaginer qu'un beau jour, grâce à la large reconnaissance et à la haute appréciation de leur professeur, ils apparaîtront plusieurs fois en groupe, parcourront les rues du conte de fées ville pendant des jours, visitera des musées célèbres, admirera la culture française et établi en France surprendra les invités par leurs connaissances lors des rencontres.

Aida Mardanyan a fait du français la langue préférée des étudiants et en a fait un véritable moyen de donner naissance aux rêves et de les réaliser. Grâce à lui, comme lui, ses élèves sont tombés amoureux du merveilleux français et de la France, la ville de l'amour, Paris, son histoire ancienne, sa culture, et ils l'ont aimé, l'ont beaucoup aimé...

Ce n'est pas un hasard si le nombre de personnes souhaitant apprendre le français augmente. Il avait des dizaines de groupes qu'il pratiquait personnellement, sans même se soucier de sa santé...

Les dates de naissance et de décès de ceux qui quittent ce monde sont généralement mentionnées devant leur nom... C'est également le cas d'Aida Mardanyan... Mais les années qu'elle a vécues sont des valeurs irrévocables, inoubliables et d'un grand mérite, qui la placent et la placeront parmi les personnes vivantes, inoubliables et infiniment reconnaissantes...

Chère Aïda, Tu n'es pas physiquement avec nous, tu ne nous entends pas et tu ne vois pas les larmes d'amour, le désir sans limites et le chagrin sans vergogne dans les yeux de tes étudiants et de tes proches, mais qui connaît les miracles de Dieu... Peut-être qu'il le fera. donnez-vous notre respect et notre amour, la gratitude et l'honneur de notre société, écoutez, souriez modestement comme vous et... repentez-vous de nous avoir causé de la douleur, de nous avoir quittés inopportunément et de manière inattendue...

Vous avez laissé un chemin lumineux, que votre âme soit éternellement dans les lumières... Que chaque étudiant et étudiant universitaire qui ouvre les portes de l'auditorium portant votre nom et entre se souvienne de votre nom, de votre grande gratitude et marmonne en silence Nous le ferons. ne t'oublie pas, nous nous souviendrons toujours de toi, cher, très cher ami Mardanyan...